

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մալիշկայի համայնքապետարանը հրավիրում է հողամասերի աճուրդ վաճառքի 3 լոտով, որը տեղի կունենա 2020թ.-ի օգոստոսի 6-ին ժամը՝ 11:00-ից: Հասցեն՝ Վայոց ձորի մարզ Մալիշկա համայնք 1-ին փողոց շենք 1:

ԼՈՏ 1 Մալիշկա համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող.

1.2312 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0276-0012 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական. գործառնական նշանակությունը՝ արոտավայր) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200%-ի չափով՝ 153900 (հարյուր հիսուն երեք հազար ինը հարյուր) հազ. ՀՀ դրամ:

ԼՈՏ 2 ա) 0.22988 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0881 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական. գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 21551 (քսանմեկ հազար հինգ հարյուր հիսուն մեկ) հազ. ՀՀ դրամ:

բ) 0.54548 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0882 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական. գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 51139 (հիսուն մեկ հազար հարյուր երեսուն ինը) հազ. ՀՀ դրամ:

Լոտի ընդհանուր մակերեսը կազմում է 0.77536 հա, արժեքը՝ 72690(յոթանասուն երկու հազար վեց հարյուր ինսուն) ՀՀ դրամ:

ԼՈՏ 3 1.8 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0883 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական. գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 140%-ի չափով՝ 157500 (հարյուր հիսուն յոթ հազար հինգ հարյուր) հազ. ՀՀ դրամ:

ԼՈՏ 4 0.09467 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0274-00063 նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության. գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 499857 (չորս հարյուր ինսունինը հազար ութ հարյուր հիսուն յոթ) հազ. ՀՀ դրամ:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է աճուրդին նախորդող երրորդ օրը, 03.08.2020թ. 18:00:

Հայտ կարող են ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրենց հետ կունենան անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը: Հայտի ներկայացման համար անհրաժեշտ է վճարել 5 000 ՀՀ դրամ տեղական վճար և նախավճար՝ աճուրդի օրը լոտի 5%-ի չափով :

Վճարում կարող էք կատարել ինչպես կանխիկ՝ Մալիշկայի համայնքապետարանի հաշվապահություն, այնպես էլ անկանխիկ հետևյալ հաշվեհամարին՝ տեղական վճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355119166 Կենտրոնական գանձապետարան,

-նախավճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355119109 Կենտրոնական գանձապետարան:

Աճուրդում չհաղթած մասնակցի մուծված նախավճարի չափը վերադարձվում է տեղում՝ գրավոր դիմելուց հետո:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել Մալիշկայի համայնքապետարան, հեռ. (+374) 93 18 90 64 (Մամվել Այվազյան):

06.07.2020թ